«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Ընթերցելու կարողությունների զարգացման ապահովումը տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ

Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ

Կարինե Զաքարյան

ՄԱՐԶ

Արագածոտնի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Ծաղկաշենի Կ. Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոց

ԱՊԱՐԱՆ **2022**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ I

Կարդալու սկզբնական կարողությունների ձևավորման առանձնահատկությունները մայրենիի դասերին……5

1.1.Տարրական դպրոցում ընթերցանությանը ներկայացվող պետական չափորոշիչների պահանջները……6

1.2.Կարդալու սկզբնական կարողության արագ, հեշտ և ճիշտ ձևավորմանը նպաստող փոխկապակցված նախադրյալների ստեղծումը……8

Գլուխ II

Կրտսեր դպրոցականների ընթերցելու կարողությունների ձևավորումը……..…12

2.1. Ընթերցանության տեսակները և դրանց զարգացման հնարները……12

2.2.Արտադասարանային ընթերցանությանը և դրան ներկայացվող մանկավարժահոգեբանական մոտեցումները……15

Եզրակացություն……18

Օգտագործված գրականության ցանկ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է աշակերտի լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային հմտությունների ձևավորմանը: Դեռևս նախադպրոցական տարիքում երեխաները ազատ, անկաշկանդ արտահայտում են իրենց մտքերը, անգամ համարձակ դատողություններ են ձևակերպում ու գնահատում իրենց միջավայրում տեղի ունեցող դեպքերն ու երևույթները: Այդ դատողությունները աստիճանաբար կարող են զարգանալ, եթե մայրենիի (և ոչ միայն մայրենիի) դասերի ժամանակ կարևորեն ինքնուրույն խոսք կառուցելու, ինքնատիպ մտածողության և դրանց համար անհրաժեշտ բառապաշար «հավաքելու» աշխատանքները:

Ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական բաժիններից մեկն է: Նրանում են ամփոփվում ու նրա միջոցով են իրականացվում երեխաների մեջ կարդալու տեխնիկայի զարգացման, գործնական ճանապարհով մայրենի լեզվի ուսուցման, աշխարհաճանաչողական տարրական գիտելիքների հաղորդման ծրագրային պահանջները: Հենց այդ նկատառումներով էլ ընթերցանությունը տարրական դասարաններում աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկն է:

Միշտ էլ դպրոցի հիմնական խնդիրներից մեկը եղել և մնում է իր սաներին սովորեցնել սիրել գիրքը, օգտվել նրանից, անընդհատ նոր գիտելիքներ քաղել այնտեղից: Իսկ դրան կարելի է հասնել աշակերտների մեջ լավ կարդալու կարողությունը մշակելով, որովհետև այն մարդու մտավոր զարգացման ու առաջընթացի հիմնական նախապայմանն է: Որքան երեխաների մեջ ամուր և հաստատուն դրվեն լավ կարդալու կարողության մշակման հիմքերը, այնքան կարդալը երեխայի համար ավելի շուտ կդառնա գիտելիքների ձեռքբերման կարևոր

ու անփոխարինելի միջոց: Հետևաբար, գրաճանաչության ուսուցման ժամանակ յուրաքանչյուր նոր տառի ուսուցումը, իսկ հետագայում յուրաքանչյուր նոր բնագրի մշակումը պետք է երեխաների մեջ կարդալու կարողության մշակման ու զարգացման միջոց դառնա, որպեսզի տարրական դասընթացի վերջում վերածվի որոշակի հմտության:

Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել ընթերցանության ուսուցման իրականացման հնարավորություններն ու ուղիները տարրական դասարաններում և ներկայացնել կրտսեր դպրոցականների ընթերցելու կարողություններն ու խոսքի զարգացումն ապահովող մեթոդների և եղանակների առաջարկություններ:

Այդ նպատակով առաջադրվող խնդիրներն են՝

1. թեմայի վերաբերյալ մեթոդական գրականության ուսումնասիրում,
2. կրթական չափորոշչային և ծրագրային փաստաթղթերի ուսումնասիրում,
3. ընթերցելու կարողությունների ձևավորման և զարգացման հաջորդայնությունը ապահովող մեթոդների և եղանակների մշակում և ներկայացում:

ԳԼՈՒԽ I

ԿԱՐԴԱԼՈՒ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

«Կարդալը ամենից առաջ տվյալ լեզվի հնչյունների կամ հնչույթների հանրորեն ընդունված պատմական նշանների՝ գրերի կամ տառերի ճանաչման մտավոր գործողություն է, որովհետև կարդալու համար պետք է ճիշտ ճանաչել և միմյանցից տարբերել բոլոր տառերը՝ ամենատարբեր ու բազմապիսի տառակապակցություններում: Սա կարդալու գործողության առաջին աստիճանն է, որը, ըստ էության, գերազանցապես տեսողական գործողություն է»[1]:

Կարդալ սովորում են կարդալով, գրել՝ գրելով: Յուրաքնչյուր կարողություն հմտություն է դառնում կրկնությամբ, կարելի է ասել՝ ստեղծագործական կրկնությամբ: Այդպես է նաև կարդալու պարագայում: Երեխան պետք է շատ կարդա, որպեսզի կարողանա լավ կարդալ: Առաջին հերթին երեխան պետք է ունենա համապատասխան լեզվական գիտելիքներ՝ հնչյունի, տառի, վանկի, բառի, բառակապակցության, նախադասության մասին: Հայտնի փաստ է, որ կարդալու կարողությունների ձևավորման համար հիանալի միջոց է բարձրաձայն ընթերցումը, իսկ խոսքի արտահայտչականության զարգացման գործում անգնահատելի է դերերով կարդալը: Բնականաբար, ընթերցանությունն արտահայտիչ կարող է լինել միայն այն դեպքում, երբ ընթերցողը հասկանում է ստեղծագործության իմաստը, ընկալում է բնագրի գաղափարը, կարդում է ճիշտ և սահուն:

Կարդալ, դեռ չի նշանակում հասկանալ: Կարևոր է կարդացածը հասկանալ: Իրեն հասկանալի տեքստը հասկանալի ներկայացնել դիմացինին: Կարդալիս առանձնացնել հիմնական ասելիքը, միտքը, գաղափարը: Բացատրել անծանոթ բառն ու դարձվածքը, գտնել հանդիպած բառերի հոմանիշներն ու հականիշները, պատմելիս դրանք փոխարինել համապատասխան բառով կամ արտահայտությամբ: Դասագիրքը

[1] Տեր-Գրիգորյան Ա. Ե., Ուսուցումը երկրորդ դասարանում, Գիրք ուսուցչի համար, Երևան, «Լույս» հրատ., 1985, էջ 171:

չի կարող լինել ուսումնական միակ կամ գլխավոր նյութը, տեղեկատվության միակ աղբյուրը. ուսումնական նյութերը անընդհատ թարմացվում, հարմարեցվում են սովորողին: Ուսումնական նյութեր ընտրելիս և հաձնարարելիս ուսուցիչը նկատի է ունենում նաև սովորողի ընդունակությունները և նախասիրությունները:

1.1.Տարրական դպրոցում ընթերցանությանը ներկայացվող պետական չափորոշիչների պահանջները

1-4-րդ դասարաններում մայրենիի դասավանդման գործընթացի բովանդակությունն ու կառուցվածքը պայմանավորված են հանրակրթական տասներկուամյա դպրոցում հայոց լեզվի դասավանդման ընդհանուր խնդիրներով, որոնց լուծումը նպատակաուղղված է դպրոցականների խոսքի և մտածողության զարգացմանը, գաղափարաքաղաքական դաստիարակությանն ու բազմակողմանի, ներդաշնակ զարգացմանը: Հանրակրթական դպրոցում մայրենիի ուսուցման հիմնական խնդիրը սովորողների՝ գրագետ, քերականորեն ճիշտ, բովանդակային և արտահայտիչ, հայերենի ուղղագրական, ուղղախոսական կանոններին, գրական հայերենի շեշտադրությանը համապատասխան գրավոր և բանավոր խոսք կառուցելու կարողության ձևավորումն է:

Տարրական դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների գերխնդիրներից մեկը նաև աշխարհի մասին երեխաների գիտական հայացքների համակարգի ձևավորումն ու զարգացումն է:

Տարրական կրթության համակարգում մայրենիի ուսուցումն ունի իր յուրահատուկ տեղն ու դերը ոչ միայն նրա համար, որ այն կրտսեր դպրացականների մայրենին է, այլև այն հիմնավոր պատճառով, որ հայոց լեզուն գիտելիքների ձեռքբերման, աշխարհայացքի ձևավորման ամենազոր բանալին է, լեզվամտածողության և ընդհանրապես մտածողության զարգացման կարևոր գործոններից մեկը:

Լեզվի ուսուցման գործընթացի նկատմամբ մոտեցումները բխում են մի քանի հիմնական սկզբունքներից:

1.Լեզվի՝ որպես հասարակական երևույթի էությունը նրա հաղորդակցական գործառույթն է: Դպրոցական ուսուցման գործընթացում թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների գիտակցության և գործունեության մեջ մայրենի լեզվի

ուսումնասիրության առաջնայնության ըմբռնումը հանգեցնում է լեզվի ուսուցման արդյունավետության և նպատակայնության զարգացմանը:

2.Լեզուն և մտածողությունը փոխշաղկապված են և միասնաբար նպաստում են մեկը մյուսի, իսկ երկուսը միասին՝ սովորողների գիտակցության զարգացմանը, նրանց բարձրամակարդակ մտածողության ձևավորմանը:

3.Լեզուն բարդ բազմահամակարգ երևույթ է, որի բոլոր բաղադրամասերը պայմանավորում են միմյանց գործառույթները, և դրանով էլ իրականացնում հաղորդակցական գործառույթ:

Այսպիսով, որպեսզի մարդկային հարաբերությունների մեջ գիտակցական տեղ տրվի լեզվի դերին, անհրաժեշտ է ոչ միայն դեռևս տարրական դպրոցում մայրենի լեզվի տարրական դասընթացի միջոցով սովորողների գիտակցությունը հասցնել յուրաքանչյուր լեզվական միավորի արժեքը, այլև լեզվի հաղորդակցական գործառույթի գիտակցումը դարձնել օրախնդիր, դասարանից դասարան՝ ավելի ու ավելի հաստատուն: Ընդ որում՝ այս գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ոչ այնքան աշակերտների լեզվական գաղտնիքներին երեխաներին հաղորդակից դարձնելու գործընթացը հետաքրքրություն ներկայացնող գործունեության վերածմամբ:

Մայրենի լեզվի տարրական դասընթացի նպատակն է երեխաների ուսումնառության այս առաջին օղակում իրականացնել հետևյալ խնդիրներն ու պահանջները, որոնք հիմնականում կապվում են ընթերցանության հետ.

- երեխաների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հիմնական հատկանիշներով,
- գործնական կերպով սովորեցնել մայրենի լեզուն՝ հարստացնելով երեխաների բառապաշարը, մշակելով և զարգացնելով երեխաների լեզվական կարողությունները,
- աշխարհաճանաչողական տարրական տեղեկություններ տալ շրջապատի բնական և հասարակական երևույթների, մարդկանց և նրանց աշխատանքային գործունեության մասին,

- իրականացնել երեխաների բարոյական, գեղագիտական ու գաղափարական դաստիարակության ուղղությամբ դպրոցի առջև դրված կարևոր խնդիրները[2]:

1.2. Կարդալու սկզբնական կարողության արագ, հեշտ և ճիշտ ձևավորմանը նպաստող փոխկապակցված նախադրյալների ստեղծումը և հետագա զարգացումը

Կարդալը մտավոր գործունեություն է, որը երեխայից պահանջում է տեսողական, լսողական և տարածական մտածողության զարգացում: Այն սկսվում է նրա կյանքի առաջին գրքի՝ «Այբբենարանի» նկարների «ընթերցումից»: Երեխաները մինչև տառաճանաչ դառնալը փորձում են ընկալել և պատմել նկարները՝ պահպանելով դրանց բովանդակային ամբողջականությունն ու տրամաբանական հաջորդականությունը: Գրաճանաչության նախայբբենական շրջանը բնութագրվում է հատկապես երեխաների բանավոր խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքներով: Կրտսեր դպրոցականների ինքնուրույն խոսքի դժվարությունները բացատրվում են խոսքային հիշողության չմշակվածությամբ, և դրա ձևավորումը դպրոցում խոսքի զարգացման գլխավոր խնդիրներից մեկն է: Այստեղ կարևոր դեր է խաղում **հիշողությունը:** Հիշելը որոշակի ակտիվ գործունեության արդյունք է՝ բովանդակության մտապահմամբ: Հիշվում է այն, ինչը հետաքրքրություն է առաջացնում, տպավորվում է: Խոսքային հիշողությունը պահանջում է հիշվող նյութին համապատասխան պատկերային, իմաստային, զգացմունքային և շարժողական տեսակների զուգորդում: Այս առումով կարևոր է ուսուցչի խոսքի ունկնդրումը: Երեխաները լսում են ուսուցչի ընթերցանությունն ու արտասանությունը, մտապահման ճանապարհով սովորում են փոքրիկ բանաստեղծություններ, ամբողջությամբ կամ առանձին նախադասություններով վերարտադրում են նկար-պատմությունները: Հենց այս շրջանում էլ շահեկան է կարևորել արտահայտիչ ընթերցանության ձևավորումը: Երեխաների խոսքը հարստանում է նաև շրջակա միջավայրի պատկերացումների ձևավորման հիման վրա: Առանձին հնչյուն-տառերն ուսուցանելիս ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի դրանց պարզ ու հստակ արտաբերմանը: Դրա համար անհրաժեշտ է գործնական աշխատանքների միջոցով

[2] Հանրակրթական դպրոցի Հայոց լեզու և Գրականություն առարկայական չափորոշիչ և ծրագրեր (1-9-րդ դասարաններ) ՀՀ ԿԳ նախարարի 29. 08. 2011թ. N 1000-Ա/Ք հրաման, http//www.edu.am:

զարգացնել լեզվի, շրթունքների, ստորին ծնոտի և հետին քիմքի ճկունությունը և շարժողականությունը, խորացնել և ակտիվացնել աշակերտների **լսողությունը** և հնչյունային վերլուծությունների միջոցով զարգացնել դրանց ճիշտ արտաբերությունը:

Սովորողների կարդալու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց՝անհրաժեշտ է նաև արտահայտիչ խոսքի և կարդալու կարողություններ մշակել դեռևս գրաճանաչության այբբենական շրջանում: Այդ աշխատանքը պետք է սկսել՝ աշակերտներին ծանոթացնելով խոսքի տեխնիկայի բաղադրիչներին՝ շնչառություն, ձայն, հնչերանգ, առոգանություն: Հատուկ շնչառական վարժությունների միջոցով աշակերտներին առաջին հերթին պետք է սովորեցնել ճիշտ շնչել: Կարելի է կատարել առոգանությունը զարգացնող վարժանքներ:

Մեթոդիկայում մշակված են աշակերտների հնչյունային լսողությունը և առոգանությունը զարգացնող շատ վարժություններ:

Այսպես՝

- կարդալ մտքում,
- արտասանել շշուկով, դանդաղ, ցածրաձայն, կամաց, բարձրաձայն և արագ:

Նախադասության մասին տարրական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է երեխաների ուշադրությունը հրավիրել հարցական, բացականչական, հրամայական, պատմողական նախադասությունների ելևէջավորման վրա և սովորեցնել գործնականորեն տարբերել դրանց ընթերցման առանձնահատկությունները:

Հետայբբենական շրջանում ամրակայվում և զարգացվում են այբբենական շրջանում երեխաների ձեռք բերած կարդալու կարողությունները, որոնք հիմք են դառնում կարդալու որակական հատկանիշների ձևավորման համար: Այս փուլում գերակշռում է **դասարանային ընթերցանությունը**: Առաջին դասարանի վերջում աշակերտները պարզ նախադասությունները կարդում են գրեթե ամբողջական բառերով և նախատեսված առոգանությամբ: Արտահայտիչ ու առոգանությամբ ընթերցանելու կարողության զարգացման համար ուսուցիչն առաջնորդվում է **«կարդալ, ինչպես խոսում են»** սկզբունքով՝ պահպանելով կենդանի խոսքի հնչերանգն ու առոգանությունը:

Հետայբբենական շրջանի հիմնական խնդիրը կարդալու կարողության ամրակայումն ու հետագա կատարելագործումն է: Ուսումնառության չորս տարվա ընթացքում աստիճանաբար զարգանում ու կատարելագործվում են կարդալու կարողությունները: Առաջին և երկրորդ դասարաններում արդեն ձևավորվում ու մշակվում են ճիշտ, սահուն և գիտակցաբար կարդալու կարողությունները, որոնք ամրակայվում են հետագա դասարաններում: Երկրորդ դասարանի ծրագրով նախատեսված նյութն առաջին դասարանում ուսումնասիրածի տրամաբանական շարունակությունն է՝ ծավալումով ու խորությամբ և նոր գիտելիքների հաղորդմամբ: Մայրենիի առարկայական նոր ծրագրով երկրորդ դասարանում սովորողից պահանջվում է՝

- կարդալ՝ ճիշտ, սահուն, հասկանալով և արտահայտիչ,
- հասկանալ տեքստի բովանդակությունը,
- տարբերել տեքստի տեսակները (պատմողական, դատողական, գնահատողական, նկարագրողական) և այլն:

Երրորդ դասարանում աշխատանքների բովանդակությունը փոքր ինչ փոխվում է: Ավելանում է կարդացածը հասկանալու հնարավորությունը, և երեխաները ձեռք են բերում արտահայտիչ կարդալու հմտություն, բովանդակության ընկալման ընթացքը բարդանում է՝ գնալով դեպի ստեղծագործության ենթատեքստի ըմբռնում: Ուստի, անհրաժեշտ է, որ նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը խթանի երեխաների ստեղծագործական երևակայությունը, պատկերային մտածողությունը: Դրան հատկապես նպաստում են անհատական կամ խմբային աշխատանքները:

Չորրորդ դասարանում կրտսեր դպրոցականն արդեն տիրապետում է ընթերցանության, խոսքի զարգացման ու հաղորդակցական համապատասխան կարողությունների և հմտությունների՝

- սահուն և գրագետ կարդալ՝ հասկանալով կարդացածի իմաստը և պահպանելով հայերեն խոսքի ճիշտ արտասանությունը,
- հասկանալ կարդացած տեքստում հանդիպած բառերը.
- տարբերել արձակ և չափածո ստեղծագործությունները,
- կարդալ գեղարվեստական և գիտահանրամատչելի ոչ բարդ տեքստեր և բանավոր ու գրավոր վերարտադրել դրանց բովանդակությունը,

- բանավոր և գրավոր ներկայացնել իր զգացմունքները, երևակայությամբ պատկերացրածը և այլն:

Ամբողջական և արդարացի ավտոմատացված ընթերցանության հմտությունները օգնում են մարդուն անընդհատ ընդլայնել իր գիտելիքները, նպաստավոր պայմաններ են ստեղծում զարգացնելու ստեղծագործական երևակայությունը, մտավոր ունակությունները :

Դպրոցում մայրենի լեզվի խնդիրը խոսքային հմտությունների, կարդալու կարողությունների զարգացումն է: Իսկ սովորողը կարդում ու գրում է անընդհատ, բոլոր դասաժամերին: Դպրոցականի խոսքը զգայուն է: Հայ դասական ստեղծագործությունների ուսուցումը փոխանցում է այնպիսի լեզվական կաղապարներ, որոնք նպաստում են լեզվամտածողության զարգացմանը: Համաշխարհային մանկական գրականությունից ընտրվում են այնպիսի նմուշներ, որոնց ընթերցումը խթանում է սովորողի ստեղծագործական միտքը, նպաստում երևակայության զարգացմանը:

ԳԼՈՒԽ II

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2.1.Ընթերցանության տեսակները և դրանց զարգացման հնարները

Կարդալու հմտությունը տարրական դասարաններում մայրենիի դասի հիմնական նպատակն է, այն ձեռք է բերվում հաջորդական քայլերի հետևողական կիրառմամբ: Այն ձևավորվում է երեք փուլով՝ **վերլուծական, համադրական** և **ավտոմատացված**: Վերլուծական փուլում սկսնակ ընթերցողի ընթեցողական տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը: Համադրական փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը, երրորդ փուլում սովորողներն ընթերցում են ամբողջական նախադասություններով: Այս փուլում աշակերտները, որպես կանոն, սահուն կարդում են:

Հայտնի է արտահայտիչ ընթերցանության երկու եղանակ՝ բեմական և դասարանական: Անառարկելի է, որ արտահայտիչ կարդալու նախապայմանը բնագիրը լավ հասկանալն է: Կան նաև մի շարք արտաքին նշաններ, որոնք երեխաները պետք է ճանաչեն ու ըմբռնեն: Դրանք հայերենի կետադրական ու առոգանական նշաններն են: Աշակերտներն աստիճանաբար պետք է գիտելիքներ ձեռք բերեն արտասանական երանգավորման կամ հնչերանգի ու նրա բաղադրիչների մասին: Նրանց գիտակցությանը պետք է հասցվի, որ խոսքն ազդեցիկ ու լսելի դարձնելու համար կարևոր են ձայնի ու նրա ելևէջների փոփոխությունը՝ բարձրացումն ու ցածրացումը, կարդալու տեմպը, ռիթմը, դադարները, շեշտը, և սովորեցնի այդ ամենը կիրառել կարդալու ընթացքում: Կետադրական նշանների մասին նախագիտելիքներ տրվում են դեռևս գրաճանաչության նախապատրաստական շրջանում: Հենց այս փուլում էլ անհրաժեշտ է աշակերտներին բացատրել, թե կետադրական կամ առոգանության որ նշանն ինչպես է կարդացվում: Եվ այդ կարողությունն աստիճանաբար զարգացնել մինչև երրորդ դասարանի վերջը: Գրաճանաչության այբբենական և հետայբբենական շրջաններում կրտսեր դպրոցականները ընթերցանության ժամանակ դժվարանում են, չեն կարողանում տարբերակել

առոգանության նշանների հնչերանգը: Որպեսզի երեխաները լավ ըմբռնեն և տարբերեն նախադասությունների հնչերանգը, ուսուցիչը կարող է օգտագործել խաղի ընթացքում հնչած երկխոսությունները՝ բացատրելով հնչերանգը: Ապա պետք է պահանջել՝ կրկնել հրաման, բացականչություն, հարցում արտահայտող նախադասությունները: Այնուհետև երեխաների ուշադրությունը կենտրոնացվում է դրանցից յուրաքանչյուրի արտասանությանը:
Այս կերպ գործնականորեն կարելի է յուրացնել տալ նաև բացականչության, հրաման, խնդրանք արտահայտող նախադասությունների հնչերանգը:Մեթոդիկայում մշակված են մի շարք հնարներ, որոնք նպաստում են ընթերցած ստեղծագործությունը խորությամբ ըմբռնելուն.

- Դիտարկել և մեկնաբանել ստեղծագործության վերնագիրը:
- Առանձնացնել հենակետային (բանալի) բառերն ուարտահայտությունները:
- Վերլուծել բնագիրն ու պարզաբանել հիմնական գաղափարը, ենթատեքստը և այլն:

Աշակերտների արտահայտիչ ընթերցելու կարողության ձևավորմանը մեծապես նպաստում են ուսուցչի կամ աշակերտների կարդալու եղանակների վերլուծությունները, որը կարելի է կատարել հետևյալ հաջորդականությամբ.

- Կարդալ ստեղծագործությունը՝ ուշադրություն հրավիրելով ընտրված ստեղծագործությանը վերաբերող յուրաքանչյուր մանրուքի:
- Որոշել ստեղծագործության ենթատեքստը, ի՞նչ է հեղինակը կամեցել հասկացնել ընթերցողին:
- Տարբերել արձակի և չափածոյի ընթերցման յուրահատկությունները: ՏՀՏ տեսալսողական սարքերի միջոցով ունկնդրել հեքիաթ և բանաստեղծություն ու համեմատել:
- Մտքում ընթերցելով՝առանձնացնել այն գլխավոր հատվածները, որոնք հատկապես հուզել են, հետաքրքրել և զգացմունքներ արթնացրել:
- Կատարել արտասանական վերլուծություն՝ որ տողը ինչպե՞ս պետք է ընթերցել (ձայնի ինչպիսի՞ բարձրությամբ, ի՞նչ շեշտադրումներով և այլն):

Դերերով և խմբովին կարդալը ևս մեծապես նպաստում է կրտսեր դպրոցականների արտահայտիչ կարդալու կարողության զարգացմանը, քանի որ այդ

դեպքում նրանք գիտակցում են հերոսների խոսքը, հնչերանգը, ձայնի փոփոխությունները և ըստ այդմ էլ՝ ընտրում են կարդալու ճիշտ ձևն ու եղանակը:

Մեթոդների և միջոցների ընտրության ժամանակ դասվարն անհրաժեշտաբար պետք է հաշվի առնի առարկայական ծրագրի բովանդակությունը, ձևավորվող հասկացությունների կամ պատկերացումների առանձնահատկությունները: Այսպես՝ հնչյունների արտասանական դրսևորումներին ծանոթանալիս անհրաժեշտ է ամենից առաջ դիտարկել հենց իրենց՝ աշակերտների արտաբերական առանձնահատկությունները: Աշխատելով խոսքի հնչյունային կողմի զարգացման ուղղությամբ՝ ուսուցիչը պետք է հասնի այն բանին, որ աշակերտները ոչ միայն լսեն հնչյունը, այլև բառերն արտասանեն այնպես, որ պարզ և հստակ լսելի լինեն բոլոր հնչյունները:

Արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորումը նպատակահարմար է իրականացնել և՛ հատուկ, և՛ հարակից վարժությունների միջոցով: Հատուկ վարժությունները կատարվում են անմիջապես մայրենիի դասերին՝ նպատակաուղղելով հենց արտահայտիչ ընթերցելու կարողությունների զարգացմանը, իսկ հարակից վարժությունները անցկացվում են լեզվական որևէ նյութ բացատրելու ընթացքում, երբ ուսուցիչը միևնույն ժամանակ երեխաներին հանձնարարում է բարձրաձայն ընթերցել նախադասությունը՝ պարզ, հստակ և արտահայտիչ:

2.2.Արտադասարանային ընթերցանությանը ներկայացվող մանկավարժահոգեբանական մոտեցումները

Մայրենիի դասավանդման ընթացքում, ուսուցողական նպատակներից բացի, լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, ազնվության, աշխատասիրության, ճշտապահության, բարոյական մի շարք կարևորագույն հատկանիշների դաստիարակում և այլն: Այդ աշխատանքն իրականցվում է հիմնականում երկու ուղղությամբ՝ բուն դասագործընթացում (ուսուցմանը զուգընթաց) և արտադասարանային ընթերցանության միջոցով: Արտադասարանային ընթերցանությունը նշանակում է ոչ դասարանային, այսինքն՝ տնային ընթերցանություն, ինչպես նաև ընթերցանություն ոչ դասագրքից: Հենց դա է երեխային դեպի գեղարվեստական գրականություն տանող ճանապարհը: Այդ առումով՝ կարծում ենք, որ ներկայումս առկա են բազմաթիվ թերացումներ: Դեռևս տառաճանաչության շրջանում աշխատանքն այնպես պետք է կազմակերպել, որ երեխան բուռն հետաքրքրությամբ լցվի գրքի նկատմամբ և անհամբերությամբ սպասի տառաճանաչության ավարտին: Երբեմն երեխաների ոգևորությունն այնքան մեծ է լինում, որ սկսում են կարդալ մինչև տառաճանության ավարտը (վերջին 6-8 տառերը յուրացնում են արագ՝ սեփական նախաձեռնությամբ):

Արդարացի չէ առանց հաշվի առնելու աշակերտների ունակություններն ու կարողությունները՝ հանձնարարել նրանց կարդալ գրքեր և չանդրադառնալ դրանց, որևէ ստուգիչ քննարկում չիրականացնել և լավագույն դեպքում բավարարվել միայն աշակերտներին հարցնելով՝ կարդացել են, թե ոչ: Նման ոչ ճիշտ մոտեցումները կարող են սկսնակ կարդացողներին խիստ հիասթափեցնել, հուսահատեցնել, մարել այն փոքրիկ կայծը, որն արդեն կրակի էր փոխվում… Այդ կերպ երեխան կմատնվի անտարբերության գեղարվեստական գրականության հանդեպ և, առհասարակ, սովորելու հանդեպ էլ կկորցնի իր հետաքրքրությունը: Մանրամասների մեջ չխորանալով՝ պետք է նշել, որ նախ հարկավոր է երեխային սովորեցնել կարդալ, հետո նոր միայն պահանջել: Պետք է ուսուցիչը ոչ միայն կազմակերպի աշխատանքը, այլև սկզբնական փուլում իրեն պատասխանատու զգա՝ առաջնորդելու նրանց (գրքեր ընտրելու հարցում):

Դպրոցական տարիքում, իհարկե, փոխվում են ընթերցանության թեմատիկան ու նպատակադրումները: Երեխայից պահանջվում է կարդալ փոքրիկ պատմություններ, նշել փաստերը, նկարագրել բնապատկերները, բնութագրել հերոսներին եւ այլն:

Ամբողջ հարցն այն է, որ նմանատիպ աշխատանքներում պետք է կարողանալ հետաքրքրել երեխաներին, սովորեցնել կարդալ և ընկալել պատմությունը՝ տարբեր տեսանկյուններից: Հարկավոր է վստահություն սերմանել նրանց մեջ իրենց իսկ ուժերի նկատմամբ և աստիճանաբար նրանց մղել ինքնուրույն աշխատանքի:

Աշակերտներին կարդալ սովորեցնելու համար պետք է առաջարկել ոչ միայն դասագրքի նյութերը, այլ նաև անծանոթ տեքստեր (աշակերտը ընթերցել սովորում է ոչ թե նույն նյութը բազմաթիվ անգամներ ընթերցելով, այլ անծանոթ նյութի շարունակական ընթերցմամբ): Կարդալու հմտությունների զարգացման լավագույն միջոց է ինքնուրույն ընթերցանությունը: Լավ կարդալու համար պետք է շատ կարդալ: Երեխաներին գրքին «կապելու աշխատանքը պետք է հնարավորինս շուտ սկսել (սկսած գրաճանաչության շրջանից): Որպես միջոց՝ արդյունավետ է արտադասարանային աշխատանքի ճիշտ կազմակերպումը, որի միջոցով առաջադրված նյութերը խիստ կհետաքրքրեն երեխային, և նա կկապվի գրքին: Առաջին դասարանի հետայբբենական շրջանից սկսած՝ արտադասարանային ընթերցանությունը նպատակահարմար է անցկացնել փոքր չափաբաժիներով: Տանն է հանձնարարվում փոքր ծավալով նյութերի ընթերցումը (այդ աշխատանքը կարելի է դարձնել գրեթե ամենօրյա), որոնք պետք է դասարանում համապատասխան վերլուծության ենթարկվեն: Ուսուցիչը պետք է հնարավորություն տա, որ աշակերտներն իրենք հարցեր ուղղեն միմյանց, վերլուծեն ու պատասխանեն, ինքնուրույնաբար հանգեն եզրակացությունների, արտահայտեն իրենց անձնական կարծիքները, հիմնավորեն դրանք: Այս աշխատանքում արդյունավետ է *բանավեճի* մեթոդը: Բանավեճի ճիշտ կազմակերպումը պայմանավորված է ճիշտ հարցադրումներով: Հարցերը քննարկումը խթանելու նպատակ ունեն, ուստի կարևորվում է հարցերի բնույթը և դրանց ճիշտ կիրառումը: Ճիշտ հարցադրումները խիստ կարևորվում են ողջ ուսուցման գործընթացում: Դրանց ճիշտ կիրառումը կարող է մեծ հետաքրքրություն ու ակտիվություն առաջացնել երեխաների մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր աշխատանքի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

1. Կարդալու սկզբնական կարողության համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է օգտագործել ուսումնական մյուս առարկաների ընձեռած հնարավորությունները ևս:
2. Մայրենիի ժամերին շատ կարևոր է տեքստի շուրջ աշխատանքի ճիշտ կազմակերպման տեխնոլոգիան: Ընթերցողական կարողությունների ձևավորման տեխնոլոգիայի հետևողական կիրառման դեպքում երեխաները ըմբռնում են այդպիսի աշխատանքի իմաստը: Ընթերցելու կարողությունների զարգացման համար պետք է ընտրել այնպիսի մեթոդներ, որոնք կխթանեն երեխաների մտածողությունը և նպատակաուղղված կլինեն նրանց ինքնուրույն գործունեության խթանմանը:
3. Ընթերցանությունը ոչ միայն գործնական ճանապարհով երեխաների մեջ լեզվական պաշարի՝ բառերի, դարձվածքների, լեզվական ու արտահայտչական ձևերի ու բնորոշ համեմատությունների կուտակման միջոց է, այլև լեզվական կարողությունների՝ խոսքի կառուցման, բառերի ու դարձվածքների տեղին ու ճիշտ օգտագործման, համաձայնության ու կապակցության և համանման այլ կարողությունների ու հմտությունների մշակման ու զարգացման միջոց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս., Հայոց լեզու, բառ և խոսք, 2-րդ հրատ.,Եր., «Լույս»,1986,
2. Աղայան Ղ., Երկեր, հ. 4, Երևան, 1950,
3. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն: Դասագիրք բուհերի համար, 3-րդ հրատ., Երևան, «Միտք», 1967,
4. Բահաթրյան Ա., «Մանկավարժական թերթ», 1879, √8,Գաբրովսկի Ա.: Տպագիր խոսքի մայրամուտը, «Գարուն» ամսագիր, 1970, N 5,
5. Գյուլամիրյան Ջ., Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ», 2001,
6. Գյուլամիրյան Ջ., Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման հնարները, «Նախաշավիղ» N 3-4, 2001,
7. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ-97», 2009.
8. Դավթյան Մ., Ընթերցողական հմտությունների ձևավորումը դպրոցի հույժ կարևոր խնդիրներից է, «Մանկավարժություն», 2006, 3-4,
9. Էդիլյան Գ., Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս, 1923,
10. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Սարգսյան Ս., Սարգսյան Ռ., Տարրական դասարանների հայոց լեզու և մաթեմատիկա: Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր: ԿԱԻ, Եր., 2007,